ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ «ԳՅՈՒՄՐՈՒ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ

ՈՐՈՇՈՒՄ

«ՍԱՄՎԵԼ ՄԽԻԹԱՐՅԱՆ» Ա/Ձ -ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու ավտոբուս» ՓԲԸ-ի կարիքների համար «Շարժիչի յուղերի և ավտոմեքենաների յուղի զտիչների» ձեռքբերման «ԳԱՎՏՈ-ԳՀԱՊՁԲ-24» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել **«26» «փետրվարի» 2024 թվական ժամը 11^{00}**-ին:

Գնահատման արդյունքում արձանագրվել է անհամապատասխանություն մասնավորապես.

✓ **«Սամվել Մխիթարյան» Ա/Ձ-ի** ներկայացրած հայտի ամբողջական նկարագրի (հավելված 1.1) առաջին չափաբաժնի ապրանքի տեխնիկական բնութագրում շարժիչի յուղի կլասիֆիկացիան ներկայացված է API SL/CH-4, հրավերի փոփոխված բնութագրում ներկայացված է API SN/CH-4, OPTIMA GT 10W-40 կամ համարժեք: Բնութագրում ներկայացված չէ, թե ինչպիսի շարժիչների համար է նախատեսված տվյալ յուղը, ներկայացված չէ արտադրման տարեթիվը: Ինչպես նաև Ապրանքային նշան, մոդել նշված է թերի: 2-րդ չափաբաժնում ևս ապրանքային նշան, մոդել, արտադրողի անվանում նշված է թերի:

Նշված անհամապատասխանությունների պատճառով գնահատող հանձնաժողովը չի կարող իրականացնել լիարժեք գնահատում:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին № 526-Ն որոշման 41-րդ կետի, ինչպես նաև հիմք ընդունելով վերը նշվածը, գնահատող հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը:

Ըստ գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին № 526-Ն որոշման 42-րդ կետի, եթե սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

«Սամվել Մխիթարյան» Ա/Ձ-ն պատշաճ ծանուցված լինելով առկա անհամապատասխանությունների շտկման մասին սահմանված ժամկետում չի իրականացրել անհամապատասխանության շտկումը:

Հիմք ընդունելով գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին № 526-Ն որոշման 42-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշել է «Սամվել Մխիթարյան» Ա/Ձ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու ավտոբուս» ՓԲԸ-ի կարիքների համար «Շարժիչի յուղերի և ավտոմեքենաների յուղի զտիչների» ձեռքբերման «ԳԱՎՏՈ-ԳՀԱՊՁԲ-24» ծածկագրով

գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի մարտի 21-ին կնքված № 1 «ԳԱՎՏՈ-ԳՀԱՊՁԲ-24-1» և № 2 «ԳԱՎՏՈ-ԳՀԱՊՁԲ-24-2» պայմանագրերի մասին տեղեկատվությունը հրապարակված է տեղեկագրում:

Արդյունքում «Սամվել Մխիթարյան» Ա/Ձ-ն խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, ինչը հանգեցրել է գնման գործընթացի տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և համաձայն «Գնումների մասին« ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի գտնում եմ, որ «Սամվել Մխիթարյան» Ա/Ձ-ն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար առկա են բոլոր հիմքերը, քանի որ տվյալ ընթացակարգը իրականացվել է առանց հայտի ապահովման պահանջի, ուստի հայտի ապահովման գումար չի կարող պահանջվել և գանձվել, հետևաբար որոշում եմ՝ «Սամվել Մխիթարյան» Ա/Ձ-ին ներառել տվյալ ցուցակում:

Կից ներկայացվում է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

«Գյումրու ավտոբուս» ՓԲԸ-ի տնօրեն՝ _____Ռ. Անդրիասյան
(ստորագրություն)

Կ.Տ